

ՀՏԴ 941 (479.243)

Հայ ժողովրդի պատմություն

## ՀԵՏԽՈՐԴՄԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ Վաշիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Բանալի բառեր՝** հայկական սփյուռք, հետխորհրդային տարածք, Ռուսաստանի հայ համայնք, Ուկրաինայի հայ համայնք, Բելառուսի հայ համայնք, Թուրքմենստանի հայ համայնք, Ղազախստանի հայ համայնք, Տաջիկաստանի հայ համայնք, Ուզբեկաստանի հայ համայնք, Վրաստանի հայ համայնք:

**Ключевые слова –** армянская диаспора, постсоветская территория, община армян России, община армян Украины, община армян Беларуси, община армян Туркмении, община армян Казахстана, община армян Таджикистана, община армян Узбекистана, община армян Грузии

**Keywords -** Armenian diaspora, the post-Soviet territory, Armenian community of Russia, Armenian community of Ukraine, Armenian community of Belarus, Armenian community of Turkmenistan, Armenian community of Kazakhstan, Armenian community of Tajikistan, Armenian community of Uzbekistan, Armenian community of Georgia

### B. Արսեն Արյունյան

#### Становление армянских общин постсоветского пространства

В статье рассматриваются изменения, произошедшие в армянской диаспоре после раз渲ала СССР, их положительные и отрицательные стороны, создание новых общин и усугубление проблемы сохранения национальной идентичности.

Армянская диаспора, сформированная после геноцида, в ходе десятилетий подверглась некоторым изменениям, обусловленные "демографическими" переменами, происходящими внутри диаспоры. В результате этих изменений сегодня, с одной стороны более остро поставлен вопрос сохранения национальной идентичности, с другой стороны, образуются новые возможности на пути осуществления национальных целей.

### V. Harutyunyan

#### Formation of the Armenian Community of Post-Soviet Space.

The article deals with the changes that occurred in the Armenian diaspora after the collapse of the Soviet Union, as well as their positive and negative sides, the emergence of new communities and the worsening of the problem of the retention of the Armenian identity.

Being a result of the Genocide, the Armenian Diaspora has undergone certain alterations during the decades. They were due to "demographic" changes taking place inside. As a result, the issue of the preservation of national identity is more acute nowadays, and new opportunities emerge on the way of the realisation of national objectives.

Հոդվածում ներկայացված են ԽՍՀՄ փլուզումից հետո հայկական սփյուռքում տնիկ ունեցած տնդաշարժերը, դրանց դրական ու բացասական կողմերը, նոր համայնքների կազմավորումն ու հայապահպանության խնդիրները:

Ցեղասպանության հետևանք հանդիսացող հայկական սփյուռքը տասնամյակների ընթացքում ենթարկվել է որոշակի փոխակերպման՝ կապված նրա ներսում տնիկ ունեցող «ժողովրդագրական» տնդաշարժերի հետ, որոնց հետևանքով այսօր, մի կողմից՝ ավելի սուր է դրված ազգային ինքնության պահպանման հարցը. մյուս կողմից՝ նոր հնարավորություններ են բացվում համագոյական նպատակների իրականացման ճանապարհին:

Ցեղասպանության հետևանք հանդիսացող հայկական սփյուռքը տասնամյակների ընթացքում ենթարկվել է որոշակի փոխակերպման՝ կապված նրա ներսում տնիկ ունեցող «ժողովրդագրական» տնդաշարժերի հետ: Այդ փոխակերպման ընթացքում կարևոր նշանակություն ունի ինչպես մարտահրավերներին դիմագրավելու, այնպես էլ ընձեռված հնարավորություններից առավելագույնս օգտվելու տեսանկյունից:

Սույն հոդվածի շրջանակներում նպատակ ենք ունեցել ներկայացնելու ԽՍՀՄ փլուզումից հետո հայկական սփյուռքում տնիկ ունեցած տնդաշարժերը, նոր համայնքների կազմավորումը, դիտարկելու այդ գործընթացի դրական ու բացասական կողմերը:

Ցեղասպանության հետևանքով սփյուռքի հայկական համայնքներ ձևավորվեցին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում՝ Սիրիայում, Լիբանանում, Իրանում, Եգիպտոսում և այլն: Եղենից

փրկված հայերի խմբերը հաստատվեցին նաև Եվրոպական Երկրներում՝ Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա, Ֆրանսիա և այլուր, ինչպես նաև Ամերիկայում՝ ԱՄՆ, Կանադա և այլն:

Հետազայում, սակայն, նկատվեց հայերի գաղթ Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներից դեպի Արևմտյան՝ ԱՄՆ, Կանադա, արևմտանվարդական զարգացած Երկրներ: Այդ մասին է վկայում Մերձավոր և Միջին Արևելքի Երկրների հայ համայնքների թվաքանակի շարունակական նվազումը՝ արևմտյան Երկրների հայ համայնքների թվաքանակի շարունակական մեծացման հետնապատճերին:

Այսպես՝ եթե 1960-ական թթ. սկզբին ԱՄՆ հայության թվաքանակը կազմում էր մոտ 250 հազար<sup>1</sup>, ապա 21-րդ դարի սկզբին այն կազմում է մոտ 1.2 մլն<sup>2</sup>: Փոխարենը, Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներում, օրինակ, Միջայում, եթե նույն 1960-ական թթ. սկզբին հայերի թվաքանակը կազմում էր մոտ 150 հազար<sup>3</sup>, ապա նախքան սիրիական վերջին ճգնաժամի սկիզբն այդ թիվը կազմում էր 65-70 հազար<sup>4</sup>:

Ցեղասպանությունից հետո հայերի ամենախոշոր տնηաշարժը տեղի է ունեցել 1990-ական թթ.: Այդ ժամանակահատվածում էական փոփոխություններ է կրել հայկական սփյուռքը, մասնավորապես, ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով նախկին Խորհրդային հանրապետություններում առաջացան հայկական համայնքներ: Վերջիններիս ներկայացուցիչները մինչև 1990-ական թվականներն ապրել են նոյն պետության սահմաններում, և այսօր լիստ տարօրինակ է հնչում, օրինակ, մարշալ Բաղրամյանին, Արամ Խաչատրյանին, Օքբելի Եղբայրներին, Անաստաս Միկոյանին և բազմաթիվ անվանի մարդկանց, որոնք եղել են Խորհրդային պետական ու զորական անձնակազմի, գիտության ու տնտեսության, կրթական գործի և արվեստի ներկայացուցիչներ, կոչել սփյուռքահայեր<sup>5</sup>:

Սփյուռքի վերը նկարագրված փոխակերպումն ունի ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմեր:

Գլխավոր մարտահրավերն այս առնչությամբ հայապահանության խնդրի սրումն է: Հայտնի է, որ հայերը հետխորհրդային տարածքում, սերտորեն ինտեգրվելով իրենց Երկրների հասարակություններին, ավելի հեշտ և արագ են կորցնում ազգային ինքնության այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մայրենի լեզուն, հաղորդակցությունն ազգային մշակույթին և պատմությանը, ազգային ինքնազիտակցությունը և այլն: Հատկապես սուր է լեզվի խնդիրը, քանի որ Ռուսաստանի, Ուկրաինայի, Բնալառուսի, Վրաստանի և այլ քրիստոնյա աշխարհիկ Երկրների հայերի շրջանում սերնդներուն ավելի է նվազում մայրենի լեզվին տիրապետողների թիվը: Իսկ նման իրավիճակում «...նրանց հետագա ազգային պատկաննելությունը դառնում է անհայտ ու մշուշապատ: Կորցնելով լեզուն և ազգային բնափորության ու հոգեբանության հիմնական գծերը՝ հետզինետե մթագնվում են ազգային ինքնազիտակցությունն ու ազգային շահի գիտակցումը»<sup>6</sup>:

Առկա իրավիճակը, սակայն, մարտահրավերների հետ մեկտեղ ենթադրում է նաև որոշակի հնարավորություններ, որոնցից օգտվելը զգալի օգուտներ կրելի Հայաստանին և Սփյուռքին: Այդպիսի հնարավորություններից կարելի է առանձնացնել երեքը.

- ա) հայկական կապիտալի ծևափորում,
- բ) լորրիստական գործունեության ծավալում,
- գ) մտավոր ներուժի մեծացում:

Այսպիսով՝ Սփյուռքում տեղի ունեցող «Ժողովրդագրական» տնηաշարժների հետևանքով այսօր մի կողմից ավելի սուր է դրված ազգային ինքնության պահպանման հարցը, մյուս կողմից՝ նոր հնարավորություններ են բացվում համազգային նպատակների իրականացման ճանապարհին:

Այս համատեսքառում անդրադառնաք հետխորհրդային տարածքում հայկական համայնքների կազմավորման գործընթացին:

<sup>1</sup>Տե՛ս Գասպարյան Ա., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր. մշակույթային կյանքի ուրվագիծ, Եր., Հայաստանի պետական հրատարակչություն, 1962, էջ 246:

<sup>2</sup>Տե՛ս «Հայ սփյուռք» համբազիտարան, Եր., Տիգրան Մեծ հրատ., 2003, էջ 33:

<sup>3</sup>Տե՛ս Գասպարյան Ա., նշվ. աշխ., էջ 246:

<sup>4</sup>Տե՛ս «Հայ սփյուռք» համբազիտարան, էջ 508:

<sup>5</sup>Տե՛ս Լարմեն Դալարյան, Հայ Սփյուռքի պատմություն, Երևան, 2004թ., էջ 174:

<sup>6</sup>Տե՛ս Հակոբյան Ա., Փիլիսոփայության հիմունքներ, Եր., Երևանի համայն. հրատ., 1994, էջ 284:

**Ուսուաստանի հայ համայնք:** Հստ պատմական աղբյուրների՝ XI-XII դդ. հին Ուսուիայի մայրաքաղաք Կիևում գոյություն է ունեցել ոչ մեծաթիվ հայկական համայնք:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում և Արցախում հայ ազգային զարթոնքին զուգահեռ հայկական հասարակական, ազգային-մշակութային, բարեգործական, երիտասարդական կազմակերպություններ են հիմնադրվել ՈԴ հայաշատ երկրամասերում, մարզներում և քաղաքներում: Միաժամանակ ընթացել են անքակտնի երկու գործընթացներ՝ հայկական սփյուռքի կառուցվածքային ձևավորում և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու դարավոր իրավունքների վերականգնում ու հոգևոր կյանքի աշխուժացում:

2010 թվականի պաշտոնական տվյալներով՝ ՈԴ-ում բնակչում է մոտ 1.2 միլիոն հայ<sup>1</sup>, համաձայն այլ աղբյուրների՝ 2-2.5 միլիոն:

Ուսուաստանի մի շաբթ շրջաններում գործում են բազմաթիվ կիրակնօրյա դպրոցներ, երգի ու պարի համույթներ, տպագրվում են թերթեր, համայնքների մեծ մասն ունի էլեկտրոնային կայքեջներ և թերթեր: Ուսուաստանի հայ համայնքը մեծ ակտիվություն է գուցաբերում հայկական Եկեղեցաշխնության, կիրակնօրյա դպրոցների բացման, մարզական համահայկական խաղերի մասնակցության, ուսական կենտրոնական և տարածաշրջանային հեռուստաալիքներով հայկական հաղորդումների հետարձակման գործում:

Ուսուաստանի Դաշնության տարածքում գործում է շուրջ 40 հայկական Եկեղեցի: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ՈԴ-ում ունի երկու թեմ՝ Ուսուաստանի և Նոր Նախիջևանի (թեմի առաջնորդ՝ Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյան), Հարավային Ուսուաստանի (թեմի առաջնորդ՝ Եզնիկ Եպիսկոպոս Մովսիսյան): Ուսուաստանի հայ համայնքը հիմնականում համախմբված է «Ուսուաստանի հայերի միություն» կազմակերպության շուրջ (2000 թ.):<sup>2</sup> Վերջինս իր մասնաճյուղերն ունի Ուսուաստանի 63 հանրապետություններում, երկրամասերում և մարզներում:

**Ուկրաինայի հայ համայնք:** Ժամանակակից Ուկրաինայի տարածքում հայերը բնակություն են հաստատել դեռևս միջնադարում: Պատմականորեն հայերն ապրել են Ղրիմում, Ուկրաինայի արևմտյան ու հարավային հատվածներում և առանձնահատուկ դերակատարություն ու նշանակալի ներդրում են ունեցել Ուկրաինայի արդի իրականության մեջ: Այդ մասին է վկայում հայկական հսկայական պատմամշակութային ժառանգությունը, որի անքակտնի մասն են կազմում բազմաթիվ հայկական Եկեղեցիներն ու հուշարձանները: Հստ 2001 թ. մարդահամարի տվյալների՝ հայերի թիվը մոտ 100 հազար է<sup>3</sup>: Հայ համայնքի յոթանատուն տոկոսն այժմ կազմում են հետխորհրդային շրջանում Հայաստանից, Վրաստանից, Ալբրեթանից, Միջին Ասիայից և այլ երկրներից Ուկրաինա գաղթած մեր հայրենակիցները: 1988 թվականից սկսած ուկրաինական գրեթե բոլոր մարզերում հիմնվել են հայկական հասարակական կազմակերպություններ: Ուկրաինայում գործում է հայ համայնքին վերաբարձրված, վերանորոգված և նոր կառուցված ավելի քան բարեկան Եկեղեցի:

2001 թվականին Ուկրաինայում հիմնադրվել է համառուկրաինական կառույց՝ «Ուկրաինայի հայերի միություն» կազմակերպությունը, որն իր բնույթով առավելապես համայնքային հասարակական կազմակերպությունների գործունեությունը համակարգող մարմին է: Իրենց ակտիվությամբ աշքի են ընկնում Ղրիմի, Խարկովի, Օդեսայի, Ժիտոմիրի, Լվովի, Կիևի հայ համայնքները: Ակտիվ գործունեություն է ծավալում Ուկրաինայում կից գործող Ուկրաինայի հայ երիտասարդների միությունը: Ուկրաինայում հովանափրությամբ գործում են բազմաթիվ կիրակնօրյա դպրոցներ, երգի ու պարի համույթներ, տպագրվում են թերթեր: 10 հազար տպաքանակով երատարակչում է միության ուսանեցու «Արմյանակի Վեստնիկ» թերթը: Ուկրաինայում կից ստեղծվել է Հայագիտության կենտրոն, հիմնադրվել «Հայագիտական հետազոտությունները Ուկրաինայում» գիտական պարբերական: Ղրիմում վերածնության միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է նախագիծ, որի շնորհիվ հայկական բոլոր ճարտարապետական հուշարձանները գրանցվել են, իրականացվել է դրանց մանրամասն նկարագրական և լուսանկարչական փաստագրում:

<sup>1</sup> [http://demoscope.ru/weekly/ssp/rus\\_nac\\_10.php](http://demoscope.ru/weekly/ssp/rus_nac_10.php)

<sup>2</sup> <http://www.sarinfo.org/way/syezd1.shtml>

<sup>3</sup> <http://2001.ukrcensus.gov.ua/rus/results/general/nationality/>

**Բնլառուսի հայ համայնք:** Հայ-բնլառուսական առնչությունները սկզբնավորվել են XX դ. սկզբին: Հայ համայնքը Բնլառուսում պաշտոնապես հիմնվել է 1989 թ.: 2009 թ. մարդահամարի տվյալներով՝ Բնլառուսում բնակչում են շուրջ 8,5 հազար հայեր: Հայերն իրենց թվով գրադարձնում են 6-րդ տեղը՝ բնլառուսներից, ուստի լիներից, ուկրաինացիներից և հրենաներից հետո<sup>1</sup>: Բնլառուսի հայ համայնքը ներկայացնում է «Հայաստան» կրթական-մշակութային ընկերությունը:

Մինսկի «Հայաստան» կրթամշակութային ընկերությունից բացի՝ Բնլառուսում գործում է ևս չորս հասարակական կազմակերպություն՝ Մողիլյովի «Մասիս» մարզային քարեզործական հայկական հասարակական միավորում (ունի քաժանմունք նաև Բոբրովյակ քաղաքում), Գրոդնոյի հայերի «Մուսավագու» տարածաշրջանային հասարակական միավորում, Բոբրովյակ քաղաքի «Ուրարտու» հասարակական կազմակերպություն և «Հայ Առաքելական կրոնական համայնք»: Բնլառուսում գործում են «Երեքունի» երգի-պարի ազգագրական, «Անի» ժողովրդական երգի-պարի համույթները: Հրատարակվում են հայկական «Մշասին» թերթը և «Անիվ» ամսագիրը:

**Թուրքմենստանի հայ համայնք:** Թուրքմենստանում հայկական գաղթավայրերի պատմությունը բաժանվում է չորս փուլի. 1881-1917 թթ.՝ հայկական զաղթավայրերի կազմավորում և արագ զարգացում, 1917-1939 թթ.՝ հայ համայնքների իրավական և ազգային-մշակութային ինքնավարության բռնի վերացում, 1939-1991 թթ.՝ հայերի ուժացման քաղաքականության իրականացում, 1991-ից մեր օրեր՝ ազգային կյանքի վերականգնում: 2003 թ. դրությամբ Թուրքմենստանում հայերի թիվը կազմում է մոտ 22 հազար<sup>2</sup>: Հայերը հիմնականում բնակվում են մայրաքաղաք Աշխաբադում, նաև Մարիում, Թուրքմենքաշիում, Էլուտանում, Թուրքմենքաղում: Թուրքմենստանում հայկական համայնքային կազմակերպություններ չկան: Հայ ակտիվիստների ջանքերով, սկսած 2009 թվականից, երկրի տարբեր քաղաքներում հիմնադրվել են 4 մեկօրյա դպրոցներ:

**Ղազախստանի հայ համայնք:** 2009 թ. տվյալներով Ղազախստանում բնակչում է շուրջ 25 հազար հայ: Նրանց զգալի մասն ապրում է Ալմաթիում, մյուսները կենտրոնացած են հիմնականում Կուստանայում, Ակտյուրինսկում, Կարագանդայում: 2004 թ. Ալմաթիում ստեղծվել է Ղազախստանի Հանրապետության «Նախիր» հայկական մշակութային կենտրոնների միությունը, որը միավորում է Ղազախստանի տարածաշրջանների հայկական ազգային կազմակերպությունները: Ղազախստանի քաղաքներում գործում են մի շարք հայկական համայնքային կազմակերպություններ, որոնց թվում են «Վան» ազգային-մշակութային հայկական կենտրոնը (Աստանա), «Երեքունի» հայկական համայնքը (Կուստանայ), «Ուրարտու» հայկական համայնքը (Ակտյուր), Արևելյան Ղազախստանի «Արարատ» հայկական մշակութային կենտրոնը (Ուստ Կամենովրուկ), Արևմտյան Ղազախստանի «Նյան Տապան» հայկական-լուսավորչական միությունը (Ուրալսկ), Հարավ-Ղազախստանյան շրջանի հայկական մշակութային կենտրոնը (Լրկչենտավ), «Երեքունի» հայկական մշակութային կենտրոնը (Կարագանդա), Մազհիստանուկայա մարզի հայկական ազգային մշակութային կենտրոնը (Ակտաու), «Կենտրոն» հայկական մշակույթի կենտրոնը (Պետրոպավլովսկ), «Հայրենիք» հայկական համայնքը (Պավլոդար), Հայկական մշակութային կենտրոնը (Տալդի-Կուրգան): Համայնքային կազմակերպություններին կից գործում են կիրակնօրյա դպրոցներ, որտեղ դասավանդվում են հայոց լեզու, հայկական մշակույթ, հայոց պատմություն:

**Տաջիկստանի հայ համայնք:** Հայ համայնքը Տաջիկստանում ձևավորվել է XIX դարի երկրորդ կեսին, երբ հայեր են եկել Ղարաբաղից, Նախիջևանից, Զանգեզուրից, Պարսկաստանից<sup>3</sup>: 1990-ական թթ.՝ Խորհրդային Միության ֆլուգումից հետո, երկրում ստեղծված անկայուն քաղաքական վիճակի հետևանքով, ակսենտ հայերի զանգվածային արտազադեթը Տաջիկստանից: 1994 թ. Տաջիկստանում բնակչում էր 6 հազար հայ, որոնց մեծ մասը կենտրոնացած էր Դուշանբեում: 2003 թ. տվյալներով՝ հայերի թիվը երկրում կազմում էր շուրջ 3 հազար: Դուշանբեում գործում է «Մեսրոպ Մաշտոց» հայկական մշակութային ընկերությունը, որը հիմնվել է 1989 թ.: Համայնքում կարևորվում է Տաջիկստանի

<sup>1</sup> [http://belstat.gov.by/uploads/File/GU\\_demogr/5.8-o.pdf](http://belstat.gov.by/uploads/File/GU_demogr/5.8-o.pdf)

<sup>2</sup> «Հայ սփյուռք» համբագիտարան, Եր., 2003, էջ 205

<sup>3</sup> Ամիրյան Ի.Ա., Գրիգորյան Ա.Ա., Արմեն Սредней Азии.- Современное развитие этнических групп Средней Азии и Казахстана, М., 1992, ч. 1, с. 157-169.

հայերի գբաղվածության խնդիրը, հայերենի և հայոց պատմության ուսուցման կազմակերպումը, քազվել է կիրակնօրյա դպրոց:

**Ուզրեկստանի հայ համայնք:** XIX դարի վերջին Ուզրեկստանում կար արդեն ձևավորված հայկական համայնք: 2005 թ. տվյալներով Ուզրեկստանում բնակչությունը էր շուրջ 75 հազար հայ, որից 50 հազարն ունի Ուզրեկստանի քաղաքացիություն<sup>1</sup>: Հայերը հիմնականում կենտրոնացած են Տաշքենդ (30 հազար) և Սամարդանդ (32 հազար) քաղաքներում: Հայկական համայնք կա նաև Անդիժանում:

ԽՄՀՄ փլուզումից հետո Ուզրեկստանի հայերը հնարավորություն են ստացել դրսորենու իրենց ավանդական ձևուներեցությունը և նախաձեռնությունը: Տաշքենդում, Սամարդանդում, Անդիժանում, Ֆերգանայում և այլ քաղաքներում նրանք հիմնել են առևտրական տարրեր ձևունարկություններ, քացել սրճարաններ, պանդիկներ, դարձել սեփականաշնորհիված գործարանների և ֆաբրիկաների տերեր: Դրա հետ մեկտեղ համայնքում սկսվել է ազգային ինքնազիտակցության զարթոնքը: Ուզրեկստանի անկախության հոչակումից հետո (1991 թ.) հիմնվել են Տաշքենդի Հայ մշակույթի կենտրոնը և Սամարդանդի «Լոյս» մշակութային կենտրոնը, որոնք միավորված են Ուզրեկստանի հայ ազգամշակութային կենտրոնի ներքո: Տաշքենդում և Սամարդանդում գործում են հայկական եկեղեցիներ:

**Վրաստանի հայ համայնք:** Ժամանակակից Վրաստանի տարածքում հայերը բնակվել են վարչական ժամանական ժամանական տվյալներով՝ 350 հազար հայ<sup>2</sup>: Կենտրոնացած են Թբիլիսիում, Ալսալցիայի, Ալսալցիաքի, Նինոծմինդայի, Ծալկայի, ինչպես նաև Վրաստանի հարավարևելյան շրջաններում, Աջարիայում: Գործում են 154 հայկական դպրոցներ, եկեղեցիներ, մի շարք գրական, մշակութային, հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Լոյս են տեսնում «Վրաստան» շաբաթաթերթը, «Փարոս», «Արշալույ», «Ակունք» թերթերը, «Կամորջ» և «Վերնատուն» տարեգրքերը: Վրաստանում գործում են «Շառ Ազնավոր» բարեգործական մշակութային միությունը (1988 թ.), «Զավախը. ժողովրդական շարժում» հասարակական կազմակերպությունը (1988 թ.), «Վիրը» քաղաքական կազմակերպությունը (1998 թ.) և այլն: 1992 թ. Թբիլիսիում հիմնադրվել է Վրաստանի հայերի միությունը, մինչև 1998 թվականը՝ Վրաստանի հայկական մշակութային բարեգործական ընկերություն: Հիմնական նպատակն է Վրաստանի տարածքում ապրող հայերի համախմբումը, մայրենի լեզվով կրթության, մշակույթի, արվեստի զարգացումը:

Հայկական համայնքներ գոյություն ունեն նաև Լատվիայում (3 հազար հայ), Լիտվայում (2,5 հազար), Էստոնիայում (շուրջ 2 հազար), Ղրղզստանում (շուրջ 3 հազար) և Մոլդովայում (շուրջ 8 հազար):

Այսպիսով՝ 1990-ական թթ. սկզբին հետխորհրդային տարածքում ձևավորված հայկական համայնքներն աստիճանաբար իրենց տեղում են գբաղնեցնում հայ սփյուռքում և քայլեր են ձևունարկությունը: Հիմնական նպատակն է Վրաստանի տարածքում ապրող հայերի համախմբումը, մայրենի լեզվով կրթության, մշակույթի, արվեստի զարգացումը:

## Տեղեկություններ հեղինակի մասին

**Վաչիկ Հարությունյան – ԱրՊԿ ասպիրանտ, պատմության ամբիոն**

E-mail: vachikharutyunyan@gmail.com

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ. Ավանեսյանը:

<sup>1</sup> <http://old1.hayernaysor.am/1360677280>

<sup>2</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003, էջ 545: